

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, գրաղեցրած պաշտոնը՝

Արմեն Թադևոսյան - ՀՀ ՄԱԿ կոմիտեի միջուկային անվտանգության վարչության ռեակտորի անվտանգության բաժնի պետ – պետական տեսուչ,
Վարդան Հակոբյան - ՀՀ ՄԱԿ կոմիտեի միջուկային անվտանգության վարչության համակարգերի և կոմպոնենտների բաժնի միջուկային տեղակայանքում միջուկային և ռադիացիոն անվտանգության գլխավոր պետական տեսուչ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ «ՈՒՊԱ» բաժնետիրական ընկերություն, ք. Պենզա, Ռուսաստանի Դաշնություն, 2026 թվականի մարտի 23-ից 25-ը, «Тулаэлектропривод» փակ բաժնետիրական ընկերություն, ք. Տուլա, Ռուսաստանի Դաշնություն, 2026 թվականի ապրիլի 2-ից 3-ը:

3. Հրավիրող կողմը՝ «Ռոսատոմ Սերվիս» բաժնետիրական ընկերություն:

4. Գործուղման նպատակը՝ ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի պատասխանատու սպառողների հովաքցման համակարգի մոդերնիզացիայի համար պատրաստավող սեպաձև փականների և սեպաձև փականների էլեկտրական շարժաբերների ընդունման փորձարկումներին մասնակցություն:

5. Գործուղման ընթացքը՝

«ՈՒՊԱ» բաժնետիրական ընկերության մասով՝

- «ՈՒՊԱ» բաժնետիրական ընկերության գործունեության լիցենզիաների և որակի պլանով նախատեսված փաստաթղթերի դիտարկում,
- Մասնակցություն սեպաձև փականների հիմնական բաղադրիչների նյութի և եռակցման միացումների ամրության և հերմետիկության հիդրավլիկ փորձարկումներին,
- Մասնակցություն սեպաձև փականների աշխատունակության փորձարկումներին,
- Մասնակցություն սեպաձև փականների չափերի հսկողությանը:

«Тулаэлектропривод» փակ բաժնետիրական ընկերության մասով՝

- «Тулаэлектропривод» փակ բաժնետիրական ընկերության գործունեության լիցենզիաների և որակի պլանով նախատեսված փաստաթղթերի դիտարկում,
- Մասնակցություն սեպաձև փականների էլեկտրական շարժաբերների ընդունման փորձարկումներին՝ փորձարկման ծրագրի 4-րդ գլխով նախատեսված ծավալով:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայկական պատվիրակությունը «ՈՒՊԱ» բաժնետիրական ընկերությունում ներկայացել էր հետևյալ կազմով՝

Պատվիակության ղեկավար՝ ՀԱԷԿ տեխնիկական տեսչության պետի տեղակալ Հայկ Մարգարյան:

Պատվիակության անդամներ, ՀՀ ՄԱԿ կոմիտեի միջուկային անվտանգության վարչության ռեակտորի անվտանգության բաժնի պետ – պետական տեսուչ Արմեն Թադեոսյան, ՀՀ ՄԱԿ կոմիտեի միջուկային անվտանգության վարչության համակարգերի և կոմպոնենտների բաժնի միջուկային տեղակայանքում միջուկային և ռադիացիոն անվտանգության գլխավոր պետական տեսուչ Վարդան Հակոբյան:

Այցի ժամանակ քննարկվեց «ՈՒՊԱ» բաժնետիրական ընկերության ատոմային էլեկտրակայանների անվտանգության դաս ունեցող սարքավորումներ պատրաստելու լիցենզիա ունենալու և սեպաձև փականների արտադրման փաստաթղթաշրջանառության կազմակերպման և դրանց գործող նորմատիվային փաստաթղթերի համապատասխանության հարցերը: Ընկերության ղեկավար կազմի և որակի ապահովման բաժնի մասնագետների կողմից կողմից ներկայացվեցին պահանջվող լիցենզիան, ինչպես նաև ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի համար պատրաստվող սարքավորումների որակի ապահովման ծրագիրը, ընդունման-հանձման փորձարկումների տիպային ծրագիրը, որակի պլանը, սեպաձև փականների պատրաստման նյութերի, եռակցման նյութերի, ախտորոշման նյութերի (ռադիոգրաֆիկական հսկման ժապավենների, ֆիքսատորների, մշակող նյութերի, ներթափանցող հսկման թափանցիչների, մաքրող և մշակող նյութերի) մուտքային հսկման ակտերը, սեպաձև փականների բաղկացուցիչ մասերի հիմնական նյութերի մեխանիկական և մետաղագրաֆիկական փորձարկումների արձանագրությունները, չքայքայող հսկման արձանագրությունները, եռակցման պրոցեսի օպերացիոն հսկման արձանագրությունները, եռակցման տեխնալոգիայի որակավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունները, փորձարկումների ժամանակ օգտագործվող չափիչ սարքերի ստուգաչափման վկայականները, ռադիոգրաֆիկական հսկման մատյանները և արձանագրությունները, ինչպես նաև ռադիոգրաֆիկական հսկման ժապավենները:

Հայկական պատվիրակությունը «Турлаэлектроривод» փակ բաժնետիրական ընկերությունում ներկայացել էր հետևյալ կազմով՝

Պատվիակության ղեկավար՝ ՀԱԷԿ տեխնիկական վերահսկողության բաժնի պետ Արթուր Համբարձումյան:

Մասնակիցներ՝ ՀՀ ՄԱԿ կոմիտեի միջուկային անվտանգության վարչության ռեակտորի անվտանգության բաժնի պետ – պետական տեսուչ Արմեն Թադեոսյան, ՀՀ ՄԱԿ կոմիտեի միջուկային անվտանգության վարչության համակարգերի և կոմպոնենտների բաժնի միջուկային տեղակայանքում միջուկային և ռադիացիոն անվտանգության գլխավոր պետական տեսուչ Վարդան Հակոբյան:

Նշված երկու փորձարկումների ժամանակ ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի աշխատակիցները չէին հանդիսանում փորձարկումների անցկացման հանձնաժողովի անդամներ, այլ ունեին դիտորդի կարգավիճակ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

«ՈՒՄԱ» բաժնետիրական ընկերությունում հանդիպման ընթացքում պատվիակության ղեկավար, ՀԱԷԿ տեխնիկական տեսչության պետի տեղակալ Հայկ Մարգարյանի կողմից ստորագրվեցին սեպաձև փականների պատրաստման որակի ծրագրի 5 կետերին համապատասխան փորձարկումների արդյունքների ակտերը:

Սեպաձև փականների պատրաստումը սկսվել է 2025 թվականի հոկտեմբերին, որոնք նախատեսված են եղել Կալինինի ատոմակայանի համար: Դրանք պատրաստման որակի պլանի առաջինից հինգ փուլերը՝ ներառյալ ընդունման հանձման փորձարկումները, արդեն անցել էին սկզբնական պատվիրատուի հետ համատեղ:

«Тулаэлектротяг» փակ բաժնետիրական ընկերությունում հանդիպման ընթացքում պատվիակության ղեկավար ՀԱԷԿ տեխնիկական վերահսկողության բաժնի պետ Արթուր Համբարձումյանի կողմից ստորագրվեցին սեպաձև փականների էլեկտրական շարժակների փորձարկման ծրագրի 4-րդ գլխով նախատեսված ծավալով ընդունման փորձարկումների արձանագրությունները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Սեպաձև փականների հիմնական բաղադրիչների նյութի և եռակցման միացումների փորձարկումն անցկացվեց փորձարկման տիպային ծրագրով՝ աշխատանքային ծրագրի փոխարեն: Փորձարկումն անցավ տիպային ծրագրով նախատեսված բոլոր փուլերի պահանջներին համաձայն:

Սեպաձև փականների էլեկտրական շարժաբեռների փորձարկումն անցկացվեց փորձարկման տիպային ծրագրով՝ աշխատանքային ծրագրի փոխարեն: Սեպաձև փականների էլեկտրական շարժաբեռները պատրաստվել են առանց որակի պլանի (план качества): Այդ մոտեցումը նախապես համաձայնեցված է եղել ՀԱԷԿ «ՓԲԸ»-ի հետ: Փորձարկումն անցավ տիպային ծրագրով նախատեսված բոլոր փուլերի պահանջներին համաձայն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Արմեն Թադևոսյան

Վարդան Հակոբյան